

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՂՄՈՒԿՆԵՐԸ ԺՎ. ԴԱՐԻ ՍԿԶՐՈՒՄ:

Երբ խօսում ենք Ռուբինեանց ժամանակի եկեղեցական միաբանութեան բանակցութեան վրայ, գորանով անշուշտ չէ հասկացում թէ հէնց այդ շրջանն է եղել այդպէս: Հայոց անցեալին լաւ նայելով կտեսնենք, որ բաւական է եթէ լինէր մէկ բարձրագիրք անձն թագաւոր կամ կաթողիկոս, եպիսկոպոս կամ իշխան, իսկոյն այդ բանակցութեան մէջ կքաշուէր Յոյներից՝ կարծես թէ գոցանից իւրաքանչիւրը մտածում էր իւր քաղաքագիտական խորամանկութիւնը փորձելու Հայի գլխին: Այդ եղել է թէ հին ժամանակ և թէ Բագրատունիների և Արծրունիների օրերով, որոնց նամակների վրայ ուրիշ անգամ խօսելու եմ: Սակայն ոչ մի ժամանակի այնքան աղմուկներ չեն աւանդուել մեզ, որքան ժՎ. դարի, որի պատմութիւնը խիտ անմշակ է մնացել և ինչ որ ասել են Հռովմէականութեան մտնեալիները - պարզապէս ընդունուել են: Թէ քանի քանի անորոշ կէտեր կան և թէ որքան խախուտ և անհիմն են մեզ հասցրած տեղեկութիւնները, կտեսնենք իսկոյն, երբ դիմենք դարձեալ բուն աղբիւրներին, ականատեսների պատմածներին և նոցա բարբառել տանք, նոցա՝ որոնք որքան ևս թանգագին են մեզ համար, այնքան անուշադրութեան են դատապարտուել:

ԺՎ. դարի գլխին կանգնած է մի հսկայ, որ կաթողիկոսից յետոյ երկրորդն էր համարւում ամբողջ մեծ Հայքում և բարձրացած Սիւնեաց բարձունքների վերայ, դիտում էր Հայաստանեայց եկեղեցու շուրջը: Փոքրիկ մի խլրտոց, ուղիղ թէ անուղիղ լուր, կանգատ թէ բամբասանք Հայաստանեայց եկեղեցու վրայ՝ վրդօվեցնում էր նորան և նա միջոցների էր դիմում իւր պաշտած

եկեղեցու վարակիր խաչադեցնելու: Նա բաւական չ'ըզուլուած էր բանասարկուենրի գրաբանութիւններից և ահա ամենքին զգուշացնելու համար գրիչ է առնում և գրում է մի վեհախօս գրութիւն: որ որքան նշանաւոր է, այնքան անյայտութեան մէջ է մնացել: Սրպէս զի այդ խրոխտ գրուածքի բովանդակութիւնը ներկայանայ ընթերցողի աչքի առաջ, դնենք այստեղ գլխակարգութիւնները:

Տեսաւն Ստեփաննոսի Արևեաց այցելուի և նախագահ մետրապօլիտի որդւոյ մեծի և բարեպաշտի իշխանաց իշխանին Տարսաիճին. բան դիմատրական ընդդէմ յեռետիկոսաց. և դաւանութիւն ուղիղ հաւատոյ առաքելական աւանդութեանց, ոչջամիտ վարդապետութեանց՝ կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ, զոր բնատրապէս ունի ազգս Հայոց: Զոր ազգեալ ի շարժմանէ Հոգւոյն Սրբոյ՝ հիւսեաց ի թուին Հայոց ԶԾԱ. (1302) յառաջի շաբաթուս մեծի դասկիս. բաժանեալ ի յերկոտասան գրուատս և արտաքոյ թուոյ կարգեալ:

Առաջին գրուատն՝ տուն ինչ նախադրութիւն սուրբ՝ յիսկզբան բանիս:

Երկրորդ գրուատն՝ վասն անճառ միաւորութեան Բ. բնութեանց Բանին, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել կաթողիկէ եկեղեցի սուրբ:

Երրորդ գրուատն՝ բարաւնաբար հարցուածք վասն Բ. բնութեանց, և առնուն լուծումն դիմատրաբար. և զայս ի Գ. գլուխս բաժանեալ:

Չորրորդ գրուատն՝ ընդդիմաբանութիւն վասն Բ. և այլ բնութեանցն, եթէ անհնար է ի միում դիմի լինել միութիւն. և համաբան ձայնակցութիւն նոցա՝ Նեստորի և այլոց հերձուածողաց:

Հինգերորդ գրուատն՝ ընդդէմ այնոցիկ՝ որք ապականեն զաստուածային խորհուրդն ջրով և խմրով, յորում և յայտարարութիւն խորհրդոյ եկեղեցւոյ կարճ ի կարճոյ:

Վեցերորդ գրուատն՝ դիմադրութիւն՝ որք ի խաչին ուրանան զաստուածութիւն և մարդոյ գոյ խոստովանեն զչարչարեալն վասն

մեր, և այլայլեն զերեքորբեանն և ոչ տան ասել «խաչեցար» և կամ անուն ի ներքս ածեն՝ թէ «Քրիստոս» որ մարմնացար և խաչեցար» և զրպարտեն զմեզ՝ թէ ի դէմն երրորդութեան ասէք խաչեցար»:

Եթէ երրորդ գրուաւոն՝ ի խորհուրդ նաւակատեաց եկեղեցւոյ և ճրագալուցին. զի եղծեալ լուծանի ի բաց և ծիծաղելիս համարին: Ստորագրեալ ի խնդրոյ Բարսղի Հայրապետի՝ որդւոյ Սմբատայ Բարեպաշտի:

Ութերորդ գրուաւոն՝ յաղագս մեծի տօնի ծննդեան և յայտնութեան, որք բամբասեն զմեզ՝ եթէ ի միում աւուր տօնեն զօր ծննդեան և յայտնութեան, և ինքեանք առնեն ի դեկտ. Ինն զծնունդն, և յունուարի Էն զմկրտութիւն. իսկ զաւետիսն՝ որ նախ քան զայս ի մարտի Ինն, որ է յոյժ անպատշաճ: Ի խնդրոյ տեառն Յովաննիսի՝ Արարատեան նահանգի վերադիտողի:

Իններորդ գրուաւոն՝ ընդդէմ այնոցիկ՝ որք հակառակ կան և խափանեն զկանոնեալ մատաղան՝ որ է նուէր Աստուծոյ, զգառն ս. Զատիկին, զտեառնական, և զԱգաբա՝ որ է հոգեհանգիստն. և որ յօրհնութիւնս խաչի և եկեղեցւոյ զենմունք լինին:

Տասներորդ գրուաւոն. պատճառ տօնի Հոգւոյն Արբոյ, եթէ ընդէր մի օր տօնեմք, և ոչ ըստ այլազգեաց քրիստոնէից. և յինչ դէմն հայի միոյ աւուր խորհուրդն: Եւ այս ևս ի խնդրոյ տեառն Յովաննիսի Բջնոյ եպիսկոպոսի:

Մետատաներորդ գրուաւոն. պատճառ ժողովոյն Քաղկեդոնի, և բացայայտութիւն նոցին ազանդոյն, վիպասանեալ ի խնդրոյ Խաչատուր վարդապետի Կեչառեցւոյ:

Երկուտասներորդ գրուաւոն. թուղթ հաւատոյ և նամակ ուղղափառութեան գրեալ նորին ձեռամբ յաշխարհէս արևելեան ի զիմաց եպիսկոպոսաց առ Պատրիարքն Հայոց Տէր Գրիգոր, որ յառաջն Անաւարդայ եպիսկոպոս էր:

Արտաքոյ թուոցս կայ և այլ ինչ ի սմա:

Այս վերնագրներից պարզ երևում է՝ որ Ստեփաննոս Սրբելեանի բոլոր հակաճառութիւնն ուղղած է Յունաց դէմ, ըստ որում գեռ հին բանակցութիւնների խորտումները շարունակում են:

Ափսոս որ այս գեղեցիկ գրուածքը, թէև տպուել է Կ. Պոլսում, այլ ևս ծախու չէ գտնուում: միայն վերջին գլուխն է, որ կայ նաև նորա պատմութեան մէջ: Բայց որպէս զի փոքր ի շատէ թիւ գարի առաջին՝—3 տարիները պարզենք մեր առաջ, անհրաժեշտ է քաղել քանի մի կտորներ այդ գրուածից: Հէնց սկըզբում որոշում է Օրբելեան իւր գրութեան շարժառիթն ու նպատակը:

Աստուածային և երկնաւոր շնորհն, որոյ ի վեր քան զարժանն եղաք ընդունակ, կառոյց զմեզ ի ներքոյ մեծի սպասահարկութեանս՝ տնտես լինել Բանին, և ահաչառ բաշխել հասարակաբար զբանեղէն հացն մանկանց Սիոփնի: Եւ այն առանց հեղգութեան և ժլատութեան, զի մի անհնարին տոկոսեօքն տուժիցիմք ընդ ծառային չար և վատ, որ ծրարեաց և խորեաց զառեալ քանքարն:

Այսպիսի երախտագիտութեամբ է վերաբերում Օրբելեան դէպի աստուածային շնորհն, որի կրողն է եղել ինքն: Խոյ ապա:

Վասն որոյ շարժեալ իմ ի շարժողէն բոլորից՝ շարժեցից զլեզու իմ մեծաւ համարձակութեամբ, և աներկիւղ բարբառով յառաջ մատչիմ ձայն արկանեմ յազգս Թորգոմայ, գոչեմ ուժգին յականջս եկեղեցոյ: Լուարո՛ւք ինձ, գլուխք վեհագոյնք, միտ դիք բանի իմոց, անդամք պատուականք, եղբարք իմ ի Քրիստոս և որդիք սիրելիք:

Եւ տեսէք՝ ի՞նչ է ասում այդպէս բարձր գոչելով: Ահա տեսանեմ զձեզ յափն մոլորութեան, և հետեալ սակաւիկ ինչ յարքունական ուղոյն, և հետեալ զկնի ձայնին կորստական, և մակաղեալ յարօտս տարապարտս: Բացեալ են դրունք մահու և դժոխոց, փորեալ են գուրք խորագոյնք խաւարի և ապակահութեան: Եւ որպէս զորոջս անմեղ և անարատ՝ կամին զձեզ յանխնայ արկանել ի նա: յոր թէ ըմբռնիք՝ անգերծանելի է որոգայթն:

Եւ ես երկնիս և թշուառականս՝ ակնարկեմ այսր և անոր, և ոչ զոք տեսանեմ աղէկէզ և լերգացաւ ի վերայ ձեր: Զի ոչ ոք սգայ, ոչ ումեք սիրտ ճմլի, ոչ ումեք աղիք գալարի, այլ ա-

մենեին անփոյթ և անխնամ թողեալ մնացեալ լքեալ անհոգութեամբ յամենեցունց:

Օրբելեան այդ գեղեցիք խօսքերը առաքելով դէպի Հայերը, ձայնում է՝ որ թշնամիները նոյն իսկ հաւատքից են սկսել թըշնամանել Հայոց՝ այն է փրկութեան հիմնաքարից այսինքն՝ Քրիստոսի մի բնութեան հակառակ ելնելով: Հաւատքն է մեր գլուխն և . . . նախաչարն՝ զէն առեալ զսշակերտեալսն ինքեան, նախ ընդ գլխոյս մեր մարանչի, զի զայս ի բաց հատեալ՝ զմեռեալ անդամն գիւրաւ քաշեսցէ ի կորուսան յաւիտենից:

Ուստի ի՞նչ է ուղում անել Օրբելեան, ահա թէ ինչ.

.. Նախ և առաջին յայտ իսկ ձեռնարկեմք հակաճառութեամբ, և զօրացեալք ի Հոգւոյն Սրբոյ՝ պարզ և գիւրահաս բանիք ցուցուք ձեզ զարժանն և զիրան, զճշմարիտ վարդապետութեան, զոր պարտիմք աներկեւան սիրով ընդունել:

Եւ ապա՝

Եւ ապա զխիստյթեալ մաղձս թիւնից նոցա՝ բռնալ և ճապաղել առաջի ձեր, զի ծանիջիք զմահահոտ գարշու թիւն օտար վարդապետութեան նոցա, որք շարժեալք ի չար հոգւոյն՝ ապականեցին զմեծ մասն Հայոց, և թէ համարձակիմ ոչինչ ընդհատ ի բոլորէն:

Արդէն պարզ է թէ ինչից է սոսկում Օրբելեան և ինչի՞ դէմ է կուում: պարզ է՝ որ նա ջանում է զգուշացնել իւր հօտը կտրել օտար մոլի քարոզիչների առաջն, որոնք Հայաստանի ամեն մի անկիւնում լսելի էին անում իւրեանց պառակտիչ և ապականիչ ձայնը, մինչգեռ Հայերն ուրիշ առօրեայ գործեր ունէին զբաղուելու, Ժամանակ չունէին հոգւոր յաւիտենականի վրայ ուշադրութիւն դարձնելու, վասն զի մարմնաւորի մէջ էին սուղուած, այնպէս որ թերևս կուշանային և այլ ևս չէին կարենալ կորցրածը վերստին գտնել:

Օրբելեան զարթուչիչ ձայն է արձակում, բայց ուժգին ձայն:

Օրբելեան ելնում է սպառազինուած. նա չէ ուղում յետ դառնալ իւր գործունէութեան ճանապարհից այլ մենամարտեալ, ասում է, ընդ ստուերազէն ճակատու հերձուածողացն, և Դաւթեան քարիւն հարից զճակատ շարագոռող գաղանին: Եւ այս ոչ

ինև, այլ Տերամբ զօրացեալ որպէս և նայն: Մի առ մի հերքում է նա հակառակորդների տեսութիւնները՝ միշտ հրճուելով իւր յաղթական գրչի ընթացքի վերայ: Նորա բոլոր հակաճառութիւններն, ինչպէս տեսանելի է նոյն իսկ վերնագրներից, ուղղուած են այն հարցերի դէմ, որոնք յեղյեղում էին արգէն ս. Շնորհալու ժամանակ և ս: Գորանից արգէն պարզ երևում է, որ Ժ. Գարի սկզբում Ստեփ. Օրբելիանի օրով դեռ շարունակուում էին յունական բանորոտութիւնները: Բնութեան խնդիրն ամենից ընդարձակ տեղ է բռնում և խիստ զինուած է խօսում Օրբելեան երկու բնութեան դէմ, խօսքերը դարձնելով առ Լէօ Ի. «գայ այսուհետև ախոյեանն շարութեան և զգայուէ զհոտ մաղձալից թունիցն. բերէ պանծանօք զբանս հայհոյութեան տումարին Լեոնի չարագլուխ գազանին, յոր ամբացեալ կան և զինին որպէս զլիշապ խաւարային \*»: Բայց միևնոյն ժամանակ դարձնում է իւր երկասյրի սուրը դէպի Ասողինար:

Օրբելեանի սիրտը խիստ վշտացած է. նա թէև ասում է պարզամիտ եմք, որպէս զազաւնի, բայց զխորագիտութիւն օձին ընդ մեզ ունիմք, և ոչ տամք գողանալ զմեզ քանասար գայլոցդ ի լուսակազմ փարախէ աստի, սակայն և այնպէս ողբում է՝ թէ ամենուրեք, մինչև անգամ Կիլիկիայում չարափառութիւն են քարոզում անարգել, նաև ի Թաւրէթ և ի Տիխիս, վասնորոյ և աղաչում է լսել իւր խօսքերը, և շարունակում է մի առ մի ցոյց տալ առմարի մոլորութիւններն ու հերքել, երևան հանելով նորա ասածների նմանութիւնը Պօղոս Սամոստացու, Թէոփորեոսի և Նեստորի ասածների հետ: Նոյն կերպով վարւում է և միևս կէտերի հետ, որոնք արգէն յիշուեցան:

Բաւական է այսքանս՝ ճանաչելու համար թէ ի՞նչ էր տեսնում Օրբելեանն և ինչ էր ուղղում անել: Նա ուղղակի կարօտ է համարում ժողովրդին զգուշութեան ձայնի. «Եւ այժմ» ա-

\* Մի ուրիշ տեղ ասում է. յամենայն տեղիս ուր զերկու բնութիւն վարդապետես, մերթ մերթ ի վերայ ածես՝ մի դէմք՝ մի Որդի, մի Տէր մի Քրիստոս: Ո՞վ անհաւատ և կոյր՝ առիս զի՞նչ օգուտ է քձնելդ, մինչ առաջի ամենատես աչացն Աստուծոյ մերկապարանոց ես:»

տում է նա, ով սրբածին և լուսերամ որդիք Սիօնի՝ փախիցուք յանշնարին և յանտեղի հայհոյութեանցս, մի տացուք տեղի չարին, մի և մի բնաւ հոտոտեսցուք ի ժանտալից հոտոյ գարշելի աղանդոյ նոցա: Ահա ծանուցի ձեզ ըստ կարի, զգուշասջիք ամենայն զգուշութեամբ և խորագիտութեամբ, իրրև զօձ պահեցէք զգլուխ ձեր՝ որ է հաւատն, զի մի՛ խաբիք ի քաղցր բանից նոցա, զի պատրոզ են որպէս զշրթունս սլոռնկացս: . . . . Յերես անկեալ աղաչեմ զամենեսեան՝ ոչ խնուլ զաղանջս ձեր, և ոչ կախուցանել զաչս ձեր ի հայրենի պատուիրանէն՝ որ աւանդեցաւ ձեզ յառաքելոց սրբոց և ի Հայրապետաց: Ո՛չ պատառել զցանգ հայրենի և քակել զօրէնս նախնեացն, զի մի հարցէ զձեզ օձ խարամանի ըստ գրեցելումն: Չի տեսանեմք ահա օձք բազումք վիշապաձեք՝ սրեալ զլեզուս իւրեանց և զժանիս առ ի հարկանել զձեզ . . . . :

Ուրեմն Ստեփաննոս Օրբելեան, ժամանակի գիտնականն և բարձր վերագիտողը Հայաստանեայց ս. եկեղեցու՝ ԺԿ. դարի առաջին երեք տարիներում տեսնում էր՝ որ իւր ժողովուրդը վտանգի մէջ էր մ'սրգորսների առաջ: Նա տեսնում էր և ողբում էր. բայց նա գործում էր հովուական ձայնով, վասն զի գիտէր՝ որ ժողովուրդը հովուի ձայնին էր կարօտ:

Մոլորութեան քարոզի դիմաց անհրաժեշտ էր ճշմարտութեան քարոզ գնել . . . :

Իսկ ապա ի՞նչ եղաւ:

(Շարունակելի)

Ա. ՏԵՐ ՄԻՔԵԼԵԱՆ.